ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի քաղաքապետարանը հայտարարում է մրցույթ աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝2-3-6/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ բարձրագույն կրթություն, համայնքային կամ քաղաքացիական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

բ/ "Համայնքային ծառայության մասին" "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ/ անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

դ/ համակարգչով և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

է/տիրապետում ռուսերենին /ազատ/ և մեկ այլ օտար /կարդում, կարողանում է բացատրվել/ լեզվի:

Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա/ Կազմակերպում է աշխատակազմի քաղաքաշինական փաստաթղթերի, հատակագծի, քաղաքաշինությանը վերաբերող օրենքի նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջների ապահովումը, կազմում է ձեռքբերման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը, աժշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրանց դիմաց վճարումների իրականացման ժամանակացույցերը,

բ/ կազմակերպում է ՀՀ պետական գնումների գործակալության ներկայացվող, նորակառույցների և նորոգվող օբյեկտների ու կառույցների գնման փաթեթները, մասնակցում է կազմակերպվող մրցութային հանձնաժողովների աշխատանքներին, տարերային և տեխնոլոգիական աղետների դեպքերում կազմակերպում է շենք-շինությունների և այլ ինժեներական կառույցների ուսումնասիրությունը, չափագրումը, վնասների չափերը և համապատասխան փաստաթղթերի կազմումը.

գ/ վերահսկողություն է իրականացնում համայնքի տարածքում ճարտարապետության և շինարարության բնագավառին վերաբերող ՀՀ օրենսդրության, համայնքի ղեկավարի որոշումների կատարման ընթացքին, առաջարկություններ է ներկայացնում ապօրինի շինությունների կանխարգելման, կասեցման կամ վարչական տույժեր կիրառելու մասին,

դ/ կատարում է քաղաքաշինության և ճարտարապետության հարցերին վերաբերող համայնքի ղեկավարի և իր անիջական ղեկավարի բոլոր հանձնարարությունները /եթե դրանք չեն հակասում բնագավառին վերաբերող ՀՀ օրենսդրությանը/,

է/ Ապահովում է աշխատակազմի գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր նախապատրաստելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

Դիպլոմի /վկայականի/. անձնագրի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, արական սեռի անձանց համար նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, մեկ լուսանկար՝ 3X4 չափսի:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 23.06.2015թ.: Մանրամասն տեղեկությունների համար դիմել Ճամբարակի քաղաքապետարանի աշխատակազմ:

Մրցույթը կկայանա 2015թ. հուլիսի 09-ին ժամը 11՝00-ին Ճամբարակի քաղաքապետարանում:

Ճամբարակի քաղաքապետարանի աշխատակազմ